

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍՏԱՆԱՆ

Ե. կու ընդ ընդ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշցման տողը
20 սանդիս



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՅՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՀԱՐԱԹ

Rédaction du journal

„Iravouk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравуникъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեն տրուիր

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Մեր մէջ ունակութիւն մը դարձած է ազգային հաստատութեանց իսկապէս աննախնայ զինուորական մասին զօգնութիւն յայտնել, առանց սակայն այդ զինուորական բարձրագոյն միջոցներ խորհելու ու առանց գործադրութեանը ձեռնարկելու:

Քանի մը տարին անգամ մը թաղական ու հոգաբարձու կընտրենք, և այլեւս մեր անհատական պարտքը կատարած նկատելով, չենք հետաքրքրուիր թէ այդ մարմինները ինչ միջոցներ ունին մեր ազգային հաստատութիւնները նպատակաւորմար ուղղութեան մը մէջ պահելու և կամ անոնց անկեալ վիճակը բարելաւելու: Մեր քուէները տալէ քանի մը շարժվելով, կը սկսինք քննադատել ու ըսել. «Աղբար, ասոնք ալ բան մը չկրցին ընել, ասոնք ալ անհոգ մարդիկն են եւ այլն», իբրեւ թէ մեր քուէները մեզ արդէն ծանօթ այդ մարդոց գերբնական զօրութիւն մը տալու յատկութիւնը ունեցած ըլլային:

Եթէ անկեղծաբար կուզենք որ մեր ազգային հաստատութիւնները նախանձելի վիճակի մը մէջ գըտնուին, պէտք է միանգամ ընդ միշտ համոզուինք թէ մեր ընտրած մարդիկը մեր կողմէն են, զարգացման գրեթէ միեւնոյն աստիճանին վրայ գտնուող պարզ անհատներ: Հետեւաբար զուրկ այն գերադաս ընդունակութենէն, որ կը պահանջուի քաղաքակիրթ ազգերու մէջ հանրային գործեր վարել կոչուող անձնատրութիւններէն:

Ուստի շատ սխալ է մեր ընտրած այդ պարզ մահկանացուներէն անթերի գործեր և գնահատելի արդիւնքներ սպասել, երբ մենք, ժողովուրդը, կամ մեր կարեւոր մէկ մասը չափակցինք անոնց թէ՛ գործնական և թէ՛ բարոյական միջոցներով: Իրաւ է թէ ժողովուրդը երբ իրեն դիմում ըլլայ—նիւթապէս կ'օժանդակէ: Բայց միայն նիւթական օժանդակութեամբ կամ մի քիչ դրամ վճարելով չլինար խնդիրը: Անոնց ուղեցոյց և գործակից ըլլալ պէտք է:

Արդէն, մանաւանդ մեր կրթական հաստատութեանց անկեալ կացութեան դարձանակին համար, ժողովուրդին դրամական օժանդակութիւնը անբաւական է այլեւս: Երբ մենք պահանջը որ քան զօր կը մեծնայ. իսկ ժողովուրդին տալու տեղերը դժբաղդապէս շատցած են, մանաւանդ այս պիւրջին տարիներս: Եկեղեցիէ և վարժարանէ զատ որբանոց, աղքատանոց, երկրաշարժէ արկածաւորներ, յիշափոխականներ եւն: Ասոնց ամէնէն ալ բարեկեցիկ դասակարգին ձեռքը կը նային: Երբ մէկին տայ, թէեւ ամենին ալ կուտայ մէյմէկ քիչ: Բայց այս քիչով կարելի չըլլար մեր վարժարաններու յարճուն պէտքերը գոհացնել, և այս պատճառաւ չենք կրնար ինկած վիճակէն բարձրացնել զանոնք: Ժամանակի պահանջման հետեւանօք զօգնութիւնը որ ըստ օրէ կ'աւելնայ ու աշակերտները կը սկսին օտար վարժարաններ ցրուել:

Նիւթական տեսակետով միայն մէկ միջոց կայ մեր պոլկարահայ վարժարաններու վիճակը բարելաւելու: Այն է իշխանապետութեան հիմնական օրէնքներու բարեհաճ տրամադրութիւններէն և պոլկար ազգի հայասիրութենէն օգտուելով, պետական կամ քաղաքապետական սնտուկէն չպատ մը սահմանել տալ: ասոր համար մեծ դժուարութիւններ չը պիտի ծագին եթէ մի քիչ յոգնութիւն յանձն առնենք:

Կանդաղառնանք այս ինքրոյն, ԳՈՐԾԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒՂՄԱՐԶԲ

Հանրային գործերու մէջ զեղծումներ ու գալթակցութիւններ նոյն իսկ կապակցութեամբ պետութիւններու ու զինուորական տիւրքիսին տակ ալ կը պատահին: Բայց զեղծողը ու յանցապարտը, մեր յեղափոխականներու նման, անպարտ չեն ձգեր: անգամ մը ապացուցուած ոճիրին հեղինակ:

ները խտուր կը պատժուին, առանց միջոց տալու ոճրագործին, խաչագործին ու մատնիչին որ իրենց սխաղագործութեանց ողակները ստնձարձակ կերպով բազմապատկին ու անբարոյականութիւնը յաւերժացնեն ի վնաս հանրութեան:

Վերջին շաբաթներու մէջ կարգ մը գալթակցալից դէպքեր իրարու յաջորդեցին այս ու այն պետութեան մէջ: Ի Ռուսիա այս միջոցիս միտքերը շատ յուզուած են գնդապետ կրիմի մատնութեան խնդրով: Օտար պետութեանց զինուորական գաղտնիքին թափանցելու պաշտօն ունեցող այդ ուսական սպան իր պաշտօնին ճիշդ հակառակը գործած է, առաւ քանակին գաղտնիքները Գերմանիոյ հաղորդելով, տասը տարի շարունակ: Այդչափ երկար ատեն իր մատնութեանց գաղտնի մնալը կը պարտի այն բացառիկ պաշտօնին որով օտարականներու հետ յարաբերութիւն ընելը կը վերագրուէր իր պաշտօնի բերումին, մինչդեռ կրիմի մատնութեան հակառակն է, այսինքն ինք օտարին գաղտնիք կը ծախէ եղբ: Պատերազմական նախարարը բաւական ատեն է վերադարձնելով կը դիտել թէ ինչ զուգադիպութեամբ Գերմանիոյ Ռուսիոյ պատերազմական յատակագիրներուն դէմ առ դէմ կը շարժին: օրինակ, երբ Ռուսք ծրագիր մը յաշկեն ու յարձակման կէտ մը որոշեն, Գերմանացիք քիչ վերջը ճիշդ այդ կէտին դիմացը կը համախմբեն իրենց ուժերը: Այս պատճառաւ նախարարին մտքին մէջ կասկածներ ծնած էին: Բայց երբէք իր մտքէն չէր անցուցած թէ, իրենց գաղտնի յարաբերութեանց դիւանին պիտը, գնդապետ կրիմ, դաւաճան մը եղած ըլլայ: Դիւանին վերջապէս կրիմի մատնութեանց միջոցով եղող կին մը, կերելայ թէ իրեն գոհացուցիչ բաժին մը չը տրուելուն պատճառաւ, դառն իրողութիւնը կիմացնէ որու որ անկէ:

Նախարարը արդէն կասկածոտ անմիջապէս Բեդերսպուրկէ կը փութացնէ մեծ սպայակոյտէն:

պաշտօնեաներ դէպի վարչուա, կրիմ կը ձերբակալուի, խիստ քննութիւններ ու խուզարկութիւններ կը սկսին, ու կրիմի մեղապարտութիւնը կը հաստատուի և մահուան կը դատապարտուի: Մեղապարտներն ալ կը փնտռուին, տանջանքի տակ խոստովանցել կը շանան կրիմը որ վերջապէս բանտին մէջ անձնասպան կը ըլլայ: Բայց անոր մահուամբ չի վերջանար խնդիրը, քննութիւնք ու ձերբակալութիւնք դեռ կը շարունակուին: միայն տակաւին չգիտցուիր թէ որչափ և ինչ աստիճան գաղտնիքներ մատնած է, և ուրիշ ո՞ր պետութեանց: Թէեւ առաւ թերթերուն արդիւնաւոր է գրել, բայց վերջումը ընդհանուր է զինուորական ու քաղաքական շրջանակներու մէջ ի Ռուսիա:

Խոշոր զեղծում մըն ալ Անգլիացւոց մէջ երեւան ելաւ: Հարաւ-Ափրիկեան բանակին համար Հունգարիայէ, Աւստրալիայէ, Արժանութիւն և ուրիշ երկիրներէ ձեռք գնելու գործին մէջ միլիոններ գողցուցան:

Արժանութիւն 160—170 ֆրանքի գնուած ձեռքը կառավարութեան հաշուին 500ական ֆրանքի անցուցին: նոյնպէս Հունգարիայէ գընուածները կրկնապատիկ գնով Անգլիական կառավարութեան կ'ընկնէին:

Անցեալ օր Երեսփ. Ժողովին մէջ առաջարկուեցաւ որ Հարաւ-Ափրիկեան անգլ. բանակին ձեռքու հայթայթման գալթակցալից զեղծումներուն վրայ քննութիւն մը բացուի: Բուն վիճաբանութիւն մը ծագեցաւ և քննութեան առաջարկը քուէից մեծամասնութեամբ մերժուեցաւ, պատերազմի պահուն աղբ ու զինուորները չը վատեցնելու և թշնամին չը քաջալերելու նպատակաւ: Բայց զեղծարարները ուշ կամ կանուխ իրենց պատիժը պիտի կրեն անշուշտ:

Ըօրտ Միթուէնի Պօէրներու ձեռք գերի ինչալու լուրին վրայ,

Անգլիոյ երեսփոխանական ժողովին մէջ, իւրանտացի երեսփոխաններուն անպատշաճ ծափահարութեան հետեւանօք, ծագած իրարանցումը կարծես Աւստրիոյ խորհրդարանին նախանձը գրգռեց. որ աշխարհի էն խռովայոյզ խորհրդարանը ըլլալու առաջնորդները միշտ իրեն վերապահել կուզէ:

Գեռ անցեալ օր Չէն երեսփոխանի մը Գերմանիոյ դէմ սահմանադրութեան զօրեղակէս պաշտպանելու առաջարկը վիճենտիի համագործման կուսակցութեան ջիգերը գրգռած էր. անոր իբր հակահարուած Շէօնէրերէն գերմանազգի երեսփոխանը երկար ճառ մը արտասանելէ վերջ բացագոյնից «պարիսն ու ծաղկին հօնքօղէրն» եանները: Գերմանիոյ կայսերական ընտանիքին համար արձակուած այս բացագոյնութիւնը բնականապէս շատ զիրաւորիչ էր հպարտութեան տան ծերունազարդ վեհապետին, Ֆրանց Եօզէֆ կայսեր, Ուստի որչափ որ համագործման մասնակցեցան Շէօնէրերի բացականութեան, սակայն այն ընդհանուրին վրայ շատ գէշ տպւորութիւն թողուց. ուստի միւս երեսփոխանները բողոքեցին բարկութիւնով ու իրարանցումը մեծ եղաւ: Նախագահը ի կարգ հրաւիրեց Շէօնէրերը. բայց համագործման կրկնեցին միեւնոյն խօսքը «Ապրիլն ու ծաղկին հօնքօղէրն» եանները: Ազմուկը դադարեցնելէ Չէն երեսփոխան մը սա բառերով զայրոյթ յայտնեց.

«Առաջին անգամն է որ կը լռենք այդ տեսակ խօսքերու արտասանութիւնը Աւստրիոյ խորհրդարանին մէջ, ինչ որ մեզ ամօթ է: Համագործմաններու ձեռնարկներու մասին այս նոր յայտնութիւն մը չէ մեզ. այդ աղմուկները բնական հետեւանքն են համագործման քաղաքականութեան: Բայց զոնէ այս անգամ օգտակար ըլլալին մեր կառավարութեան աչքերը բանալու որ այլեւս լռելեայն չը քաջալերէր անոնց զինուորները»:

Գերման կաթողիկէ երեսփոխան մըն ալ Շէօնէրերի ազդակին զգուանք յայտնելով ըսաւ «Բայց Աւստրիացիքս կը դատապարտենք այն խօսքերը որք առաջին անգամ ըլլալով արտասանուեցան ոչ թէ իբր գովեստ մեզ բարեկամ ու զինակից գերդաստանին (Գերման կայսեր) ալ իբրեւ վերաւորիչ մեր հայրենասիրական զգացմանց և Հապսպուրկեան տան կը յայտարարեմ թէ մենք Աւստրիացիքս առանց կուսակցութեան և ցեղի խտրութեան հաստատապէս հաւատարիմ կը մնանք մեր կայսրութեան և մեր սրտի խորէն կողմնակիցը, «Կեցցէ մեր կայսրը, կեցցեն Հապսպուրկեանք»:

Մեծամասնութեան այս արտայայտութիւնները թէեւ ըստ բառականին զոհացում տուած եղան Աւստրիոյ կայսերական ընտանիքին սակայն համագործմաններու վերաւորիչ բացագոյնութիւնը անգամ մը եւս ցոյց տուաւ թէ Ֆրանց Եօզէֆ կայսեր պատկառելի անձը հազիւ կը զօրէ կայսրութիւնը կաշտն պահելու, իսկ իր մահէն վերջ անխուսափելի է անոր բաժանումը:

Գ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԹԵՀՐԱՆ, 14 Փետրուար

Անգլիացիները, Պարսկաստանում իրենց ունեցած նախկին քաղաքականութեան անկումը նկատելով, շարունակ ջանքեր են գործ դնում ուստական քաղաքականութեան օր ըստ օրէական զօրեղացման գէմ ունէ հակաշիա ստեղծելու: Այսպէս, օրինակ, մի ազգիացի դրամաէր մօտ անցեալում տեղիս անգլիական զինուորին միջոցով երկրիս պետին ներկայացաւ եւ առաջարկեց մի քանի միլիոն անգլիական ոսկի փոխ տալ Պարսից կառավարութեանը շատ թեթեւ եւ անշնչան պայմաններով: Բայց այս բանը երբ իմացաւ տեղիս ռուսաց դեսպանատունը, անմիջապէս միջոցներ ձեռք առաւ այդ բանի դէմ, եւ

անգլիացի դրամատիրոջ առաջարկը մերժուեց երկրիս կառավարութեան կողմից:

Միւս կողմից, սակայն, Անգլիացիներն ինչ անուշին անուշ, դարձեալ կարողանում են այս-ինչ կամ այն-ինչ բանի արտօնութիւնն ստանալ կառավարութիւնից: Այսպէս անգլիացիները, բացի Ապահան Շիրազի գծից, վերջերս իրաւունք ստացան հետազոտական դիւ անցկացնելու թեհարանից մինչեւ Հիլկա քաղաքը: Նազը Բիլքանի վրայով: Այդ բանի համար թեհարանի հետազոտական վարչութիւնն արդէն այժմ տանից յայտարարել է, որ վարչութիւնը 17-20 տարեկան 25-30 հայ երիտասարդների պէտք ունի, որոնց առաջին առաջին եւ ուսման կի համար իբրեւ խմբական ուսումնական է 12 թուական եւ այդ ժամանակամիջոցում սովորեցնելու է նրանց հետազոտի խիւղը եւ այլն: Այդ երիտասարդներն ապա ըստ արժանաւորութեան պիտի ստանան 24, 36 եւ աւելի թուական ամսական ուսման եւ պիտի ուղարկուեն նոր հաստատուելիք գծի կայսրանները:

Բացի հետազոտական յիշեալ գծի արտօնութիւնից, ինչպէս սրանից առաջ ուղարկած մի թղթակցութեամբ յայտնել էի, անգլիացիներին աջողուել էր հարաւային Պարսկաստանի բոլոր նաւթանքերի կոնցեսիան ձեռք բերել: Յիշեալ կոնցեսիան ստացող անգլիացիները ներկայումս արդէն սկսել են հետազոտել հարաւային Պարսկաստանի նաւթային հողերը եւ նոյն իսկ Շուստերում արդէն կարգին գործի են սկսել:

Այս երրորդ տարին է, ինչ թեհարանում Ֆրանսական Դաշնակցութիւն անունով մի ընկերութիւն է հիմնուել: Այդ ընկերութիւնը, որի գլխաւոր նպատակն է ֆրանսերէն լեզուն տարածել Պարսկաստանում, վայելում է տեղիս ֆրանսական դեսպանատան իրկատար հովանաւորութիւնը: Ընկերութիւնը միջոցներ է ընծառում իրեն անդամաւորներին, նուէրներին, ներկայացուցիչներին եւ այլն: Այդ ընկերութիւնը թեհարանում ունի ֆրանսերէն լեզուի երկու «պրոֆեսոր»: Ընկերութիւնն ունի նոյնպէս իւր մասնաւոր գրադարան-ընթերցարանը:

Պարս-Հնդկաստանի թեմի նոր առաջնորդ Սահակ Արքեպս. Այվատեան իւր մի քանի խրատական քարոզներով բաւականին ազդեց, այսպէս ասած, տեղիս հասարակական եւ

ազգային գործիչներին երկու հաւաքակուսակցութեանց վրայ: Տեղիս հայ երիտասարդութիւնը ներկայումս, սրբազան առաջնորդի գրգռմամբ, աշխատում է թեհարանում հայ-թողութեան կան մի համալսարան հիմնել, որպիսին կայ արդէն Թաւրիզում: Այսպիսի մի ձեռնարկ թէեւ ներկայումս մեր ոյժերից վեր է, բայց տեղիս երիտասարդութիւնը եթէ անկեղծօրէն ձգտի իւր նպատակին, կարող է ապագայում հիմնել այդ հաստատութիւնը: Նորին Սրբազնութիւնը վեհափառ Հայրապետին ինքնազիր յանձնարարականներ ներկայացրեց Նորին Մեծութեան Շահին եւ պղաղէկին (ստորագրւած) Այդ յանձնարարականների յանձման միջոցին խիստ սիրալիւ ընդունելութիւն ցոյց տուեց Նորին Սրբազնութեանը: Սրբազան առաջնորդն առաջիկայ Զատական տօներին Նոր Զուգայում կը լինի իւր թեմական գործերն ստանձնելու համար: Նորին Սրբազնութիւնն ընդհանրապէս տեղիս կառավարչական շըրջաններում եւ մասնաւորապէս Նորին Մեծութիւն Շահի եւ սպարապամի կողմից սէր ու յարգանք է վայելում, որովհետեւ Պարսկ-Հնդկաստանի թեմում իւր վարած նախկին առաջնորդութեան միջոցին գիտեցել է նրանց համակրանքը գրաւել: Այդ հանգամանքը ներկայումս առիթ է տուել սպարապամին, որ խոստանայ անկեղծ Նորին Սրբազնութեան բոլոր ձեռնարկների աջողութեամբ պատկուելուն:

(Նոր-Դար)

ՍՅՏՈՒՐՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պիտոյ թերթերը կը գրեն թէ անցեալ շաբաթ իրիկուն Պատրիարքը Ազգ. Պատրիարքարանի մէջ լալ կայծ տկարութիւն մը գգաւով իր Բարայի բնակարանի փոխադրուած է, մինչդեռ հետեւեալ առաւօտուն Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի քարոզէր:

Վերջին պահուստացում տեղեկութեան մը լինելով, ուրախ ենք յայտարարելու որ Հին և Վերակազմեալ Հիշակեան կուսակցութիւնները միացած են, Մանրամասնութիւնք դեռ կը պակսին մեզ:

Գուցէ կուսակցութիւն վրադ քանի որ անձանթ մըն էք:

Ես կասկածելի մէկը չեմ որ երկու մը ունենամ: Շատ շուտ հարցաքննութեան մը պիտի տանին դիւ ու տեսնելով որ վնասակար բան մը չունիմ, պիտի թողուն բաց:

Ո՛վ գիտէ... այս պարագաներու մէջ շուտով մարդու օձիկը չազատիր: Զէ՛ որ դուք կըսէիք թէ օրէնք չկայ այս երկրին մէջ:

Ոստակցութիւնը չէր աւարտած երբ փողոցին դուռը զսրնուեցաւ: Լուսինն դնաց դուռը բանալու:

Եկողը ծերունին էր:

Ներողութիւն, որդիս, ըսաւ ծերունին խանդաղատանքով մը: Բաւական ուշացայ, չէ՞:

Հարկաւ գործ ունէիք... միշտանց երկտասարդը թոթովելով:

Ազգի որ դուրս չելաք: Այսօր քաղաքին մէջ մեծ իրաւանցում մը կար: Կըսեն թէ խուճ մը հայեր Պարսից սահմանէն ներս մտեր են ու քրիստ

Ա. ԵՐԵՄԵԱՆԻԱՆ (3)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՎԱՆԱԿԱՆ...

— Մեծ հայրդ ի՞նչ գործ կընէ:
— Քաղերն մէջ նպարավաճառ է, պարո՛ն:
— Մեծ հայրդ մարդու պէտք ունի՞:
— Այո՛, որովհետեւ իր բնկերը բաժնուել կուզէ... ինքը միեակ կը մնայ:
— Եթէ մեկնելու չըլլամ, սիրով պիտի ընդունիմ:
Մանկամարդ աղջիկը տեղեկեցաւ իր հոգին երթալով կը լեցուէր երե-

տասարդին համակրութենէն: Կը զգար թէ սիրտը կը արօրէի կուրծքին տակ: Ու յանկարծ սարսուղի գողափար մը անցաւ իր հոգիէն փայլակի արագութեամբ մը...

— Ո՛հ, պարո՛ն, կը ծածկէք ինչ... դուք այստեղ չպիտի մնաք, գիտեմ, հառաչեց Լուսին դռնութենէն խղզուած ձայնով մը, վասն զի ձեր կոչումը չպիտի թողու...
— Ինչպէ՞ս... չեմ հասկնար, Օրբո՛րդ:

— Ըսել կուզեմ թէ դուք պարտաւորուած էք մեկնելու, հետեւաբար աւելորդ առաջարկութիւններ ըրի ձեզի:

— Ինչո՞ւ համար պարտաւորուած պիտի ըլլամ:

— Որովհետեւ կոչուած էք Հայրենիքին ծառայելու, պարո՛ն:

— Օրբո՛րդ... հեծկտաց երիտասարդը:

— Մի ծածկէք, պարո՛ն, ճշմարտութիւն չէ՞ ըսածս:

— Ատեկա խնդիր մը չէ... այսօր ո՞վ չուզեր Հայրենիքին համար ծառայել:

— Եթէ խօսքով ըլլայ, շատեր կան մէջտեղ, բայց ճշմարիտ անձնուբաց քիչեր կը մնան: Մեծ հոգիներ պէտք են՝ որ գիտնան զոհուել Ազգի մը համար:

— Այո՛, իրաւունք ունիք... մրմնջեց երիտասարդն ու լռեց:

Մանկամարդ աղջիկը բացարձակ կերպով համոզուեցաւ թէ՛ երիտասարդը յեղափոխական մըն էր, եւ թէ՛ այն անունը՝ զոր ըսած էր իրեն, կեղծ անուն մըն էր:

— Ծիչդը խօսեցէք, պարո՛ն, սրբափ պիտի մնաք այստեղ, յարեց Լուսին կանացի ամենէն անուշ արտասանութեամբ մը:

— Հաւատացէ՛ք որ չեմ գիտեր... թերեւս շաբաթի մը չափ:

— Բայց չըլլայ որ տունէն դուրս ելնէք հա՞...

— Ինչու չպիտի ելնեմ... ի՞նչ պատճառ կայ:

— Քննադատի երկրաշարժի մասին տեղւոյն թաղ. խորհուրդը հետեւեալը կը տեղեկագրէ. «Փետր. 24ին տեղի ունեցաւ երկրաշարժի զօրաւոր ցնցում մը, որ տեւեց 35 երկվայրկեան, անբնական զարձնելով 3,000 տուններ: Սարսափաւոր ժողովուրդը ծայրայեղ թշուառութեան մատնուած է: Հայոց տունները գրեթէ անբնական զարձած են: Տեղական իշխանութիւնը վրաններ հաստատած է գետին եզերքը, սակայն տակաւին 3-400 հոգի առանց հացի կը մնան: Անկարելի է գիմանալ ձիւնի և ցուրտի սասկուծեղէն տղեկներու, այրիներու և որբերու լացին ու աղաղակին»: Թաղ. խորհուրդը Պատրիարքարանէն նպաստ խնդրած է:

— Աղէքսանդրիոյ մէջ կարնոյ արկածելոց ինպատու կատարուած հանգանակութեան 100 ոսկի զոր կուած է Պատրիարքարան:

— Տ. Գալուստ Սահաթեան կարինէ հետեւեալ ընկալագիրը ստացած է զոր հրատարակել կը խնդրէ:

Արքեպիսկոպոսարան կարնոյ
Ընկալագիր
Տեղւոյն երկրաշարժի հայ արկածելոց ինպատու վառնայի մէջ կատարուած հանգանակութեանց արդեանց մնացորդն մէկ ու կէս Օսմ. ոսկին Յաննիսիոսի մէջ առնուած է: Աղէքսանդր. Սահաթեանի՝ ստացուած Մեծ. Գալուստ էֆ. Սահաթեանէ եւ տուաւ սոյն ընկալագիրը:
Եկրաշարժի Արկածելոց Յաննիսիոսի
Նախագահ Զ. վրդ. Տեղ. Եղիսեան
Ատենայեան Յ. Մեղիսեան
Ատենայեան Մկրտիչ Մանկասարեան
Գանձապետ Գ. Փանկոսեան
(Կնիք) Արքեպիսկոպոսարանի Կարնոյ Կարին, 20 Փետրուար 1902
— Պատրիարքարան գրուած ըլլալով որ Այնթապի մէջ փոխպատենան անուն տղանք մը երեւան եկեր է, կրօնական ժողովոյ որոշմամբ, տեղւոյն քահանայէն բացատրութիւններ պիտի պահանջուին:

աշխատեցողութեան հետ կողմի բռնուելով անոնց գլխաւորը սպաննելու: Եւ որովհետեւ զուգ ալ նոր եկած էք, կրնար ըլլալ որ կանաչեցին ձեր վրայ ու ձերաւակցեցին:
— Ո՛հ, Աստուած իմ... միմիջեց Լուսինա դողդղալով:
— Մո՛տ օրերուս մէջ պատահած բան է, հարցուց երիտասարդը:
— Այո՛, պատահածին նայելով չաթուս մէջ եղած է զէպքը: Բաւական մեծած ու վերաբերուածներ ալ կան երկու կողմէն: Կատարուած թիւնը վաշտ մը զօրք խրկած է կողմին վայրը:
Մանկամարդ աղջիկը՝ ներսէն մօր ձայնն առնելով, պարտաւորեցաւ զուրս ելնել հիւրանոցէն: Ան ատեն երիտասարդը յայտնեց ծերունիին թէ ինքը Յաննիսիոսի մէջ էր եւ թէ կը խնդրէր իրմէն որ քաղաքին մէջ ծանօթ հայրենասէր մը ցոյց տար, որուն հետ խորհրդակցելով գործի կարենար սկսիլ:

Նուրն այս նորեկ տղանքին նկատմամբ:
— Բեգերապուրկի Հայերն 50 հազար ռուպլի հանգանակած ու զրկած են Շամախի երկրաշարժէ փոստուածներուն:
— Պաքուր բողոքականները օգուտ քաղել են օրուան աղէտէն: Հայ ազգայիններու առաջարկներն 25 ռուպլի ճանապարհի ծախք, երեք ամիս ալ 25ական ռուպլի և ձրի բնակութիւն: Քսանէհիզ ընտանիք հրապարակելով, բողոքական տուժարին մէջ գրուել և Պաքուր մեկնել են:
— Նիքոբոլի ծանօթ կրկնամուսնութեան խնդրը, զոր իրաւունք չուզեց, Պատրիարքարան ալ ձագանք գտած է և քաղաքիս աւագ երեք Տէր Մարտիրոս հօր պատրիարքական պաշտօնագիր մը եկած է, որով իրեն հրահանգ կը տրուի պաշտօնը Տէրութիւն միջոցաւ երկրորդ պսակը լուծել տալու համար պէտք եղած գիմուքը ընելու:

ԾԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ
ՆՈՐ ԵՐԻՍՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. անգամ տպագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, եւ հակառակ գոյն աժանութեանը կը պարունակէ ազգային հին և նոր գրեթէ բոլոր երգերը:
Գին 1 Ֆր.
ՆԷՏԱ ԿԱՄ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱՄԸ, Պուլկարիոյ ազատութենէն առաջ Պուլկար ժողովուրդին թուրքերէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ:
Գին 50 ՍԱՆԹ.
ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ, Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն, գրեց Ղ. Նահապետեան:
Զեղչեալ Գին 1 Ֆր.
Այս գիրքերը ստանալու համար պէտք է գրիմ իրաւունքի խմբագրութեան, բոսթի ծախքը 10ական սանթիմ միատեղ զրկելով. իսկ գիրքերու արժեքին համար, եթէ ուրիշ զիւրուակներ պակսեն, կընդունուի նամակագրութիւն 10 0/0 զեղչով:

— Ամենայն սիրով, ըսաւ ծերունին անոր ճակատը համբուրելով: Ո՛հ, խիստ ուրախ եմ որ զուս բացի ինծի քու սիրտը: Չափազանց երջանիկ պիտի համարեմ զիս, երբոր կարենամ ձեռքէս եկածը չխնայելով քեզի օգնելու:
ԳԱՇՏՈՆ ԵՒ ՍԷՐ
Երիտասարդը, — որուն վաճառական անուն պիտի տանք, — չաթաթի մը չափ մնալէ ետքը, յաջողեցաւ քաղաքին բոլոր հայասէր երիտասարդներուն միջեւ յեղափոխական շրջանակ մը կազմակերպել: Երբոր բացարձակ կերպով համոզուեցաւ թէ ամուր կապով մը միացած էին երիտասարդ գաղափարակիրներն, իր աչքը դարձուց զեղեւրու վրայ: Ուզեց թիմարայ գեղերը շրջիլ, անոնց տեղական բարքերն ու սուսնասիրել ու ըստ այնմ գործի սկսիլ:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Զ Յ Ո Ւ Յ Ա Կ
Թուղչայէն

Տ. Տ. Վրդանէսեան 10 ֆր. Մարի Տավրիսոյ 5. Թագուր Յ. Խաչեան 5. Տիկին Էօֆէնի Ս. Մ. Սահաթեան 3. Աբրահամ Կ. Մինասէրեան 5. Սիմոն Մէլտոնեան 20. Ստեփան Վարդանեան 6. Սյրի Տիկ. Թագուրի Էսկիճեան 3. Ստեփան հաճի Յովհաննէսեան 5. Նշան Դաւիթեան (Ա. կընցի) 3. Մարտիրոս Նազարէթեան 2. Փիլիպպոս Հայրդի 2. Յակոբ Լուսինեան 5. Հաճի Անդրէաս Թէրզեան 2. Խաչիկ Կարապետեան 1. Աւետիս Մեղրեան 10. Գրիգոր Սարգիսեան 5. Տիգրան Պուրա 2. Սիմոն Հաճի Կարապետեան 3. Սեդրաք Բարսեղեան 3. Միրիճեան Գալիլայեան 1. Կարապետ հաճի Յովհաննէսեան 2. Յակոբ Գրիգորեան 10. Սարգիս Հայրապետեան 3. Եղբարք Կարապետ եւ Պետրոս Վարդանեան 5. Մինաս Մանուկեան 1. Սարգիս Յովհաննէս Կարապետեան 5. Կարապետ Կոզեան 2. Մարտիրոս Ս. Մարտիրեան 1. Համբարձում Կարապետեան 5. Տիկ. Հռիմսիմ Սահաթեան 1. Դեղձմէ Սահաթեան 4. Մկրտիչ Սահաթեան 1. Գեորգ Օհան Կարապետեան 3. Մանտեք Միսնիսեան Կ. Սարգիսեան 3. Յովհաննէս Սարգիսեան 50 սնդ. Դաւիթ Դաւիթեան 5. Պաղտատար Առաքելեան 2. Գրիգոր Պողոսեան 1. Աւագ Կիւրիշեան 2. Տիկ. Երանուհի Մանուկեան 1. Յովհաննէս Չօլաքեան 2:
Թուղչայէն հաւաքուած 160.50

Է Յ Ո Ւ Յ Ա Կ
Թէքուչէն

Տ. Տ. Ստեփան Գըլըճեան 5 ֆրանք թորոս Հայապետեան 5. Ղազար Սէֆէրեան 3. Մուշեղ Կարապետ 5. Աստուածատուր Յակոբեան 5. Գրիգոր Մամիկ 10. Օհանիկ Հաճի 4. Լ. Դըրիսէ Յովհան Լազար 2. Անարէյ Թաօք 5. Չախարիս Մ. Ֆիլիսեան 4. Գեորգ Օհանէս 3. Յովհաննէս Թովմաս 3. Գ. Սամ 3. Գ. Գրիգորեան 2. Մարտիրոս Խ. Յակոբեան 2. Ահնէ Փոփովիչ 10. Վարդերէս Իպրաքիլեան 10. Պ. Կասպաթ 5. Մինաս Աթանասիոս 1. Տօնիկ Գրիգորեան 5. Նազարէթ Փիլիպպեան 5. Գրիգոր Կարին 1. Գեորգ Փիլիպպոսեան 5. Առաքել Կարապետ 5:
Թէքուչէն հաւաքուած 108 ֆր.
(Շարունակելի)

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վարչութիւնն շնորհակալութեամբ

ստացած է Պր. Պ. Գալֆայեանի միջոցաւ կատարուած հանգանակութեան գոյացած 127 ֆրանքի գումարը—նոր գրքեր բերել տալու նպատակաւ հանգանակուած.—որ յատկացուեցաւ իր նպատակին:
Յարմար առիթ կը սեպենք նաեւ մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու հետեւեալ ազգայիններուն, որոնք մասնակցած են սոյն հանգանակութեան:
Յարգանքով

Հայկ. Ընթերցարանի Վարչութեան Ատենայապետ	Ատենայապետ
Ս. Յ. Մանուկեան	Յ. Գոլոյմճեան
Ռուսուգ, 3 Մարտ 1902	Յր. Սն.
Գառնիկ Մազմանեան	— 50
Ոմն	10.—
Ոմն	5.—
Ոմն	20.—
Ոմն	5.—
Եղբարք Բէստանեան	6.—
Ոմն	5.—
Ոմն	5.—
Զ. Խաչումեան	3.—
Պ. Յակոբեան եւ Մէճէլեան	1.—
Բ. Մկրտիչեան	2.—
Մ. Բարթիկեան	1.—
Օննիկ Սարգիսեան	3.—
Յ. Ալէքսանեան	1.—
Ոմն	5.—
Ոմն	15.—
Կ. Պօհաճեան	2.—
Յ. Երամօֆ	3.—
Թ. Փափաղեան	1.—
Թ. Սուքիասեան	5.—
Եղբարք Գալֆայեան	3.—
Մ. Ալիօնեան	1.50
Ս. Գոլոյմճեան	20.—
Մ. Պէտէլեան	4.—
	127.—

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Յրաններէն եւ Գերմաներէնի հմուտ երիտասարդ մը տրամադիր է այդ երկու լեզուները սորվիլ ուղղորդուել, գոհացուցիչ պայմաններով, զասեր տալ: Դիմել խմբագրութեանս:

— Պիտի յիշէ՞ք զիս:
— Մի՛շտ...
— Ուրեմն ընդունեցէ՛ք այս գաշտը՝ որ պատուաւոր հօրս յիշատակն է կը պահեմ... Գիտցէ՛ք որ այդ նուիրական գործիքին վրայ բաւաբարուած հայ աղջիկներու վրէժը դրոշմուած է. երբոր զուգ մեր թշնամիներու արեան մէջ կը թաթխէք զայս, յիշեցէ՛ք զիս, յիշեցէ՛ք Լուսինա...
— Պիտի յիշէ՛մ, պիտի յիշէ՛մ, Լուսինա... միմիջեց Վանականը:
— Անկեղծօրէն:
— Անկեղծօրէն...
Ահա՛ այս եղաւ անոնց անբռն հոգիներու միացումը:

(Շարունակելի)

